ԳԼՈՒԽ ՃԷԹ

Ամենայն տուն ողորմութեան կառավարեսցի ձեռամբ եօթն հօր որում ասի հայրք որբոց, և ստացուածք տանս շահեցուցանեն վարձիւ 'ի վերայ արանց երաշխաւորաւ, և հայրք այսոքիկ ամենայն երիս տարւոջ մի անգամ նորոգեսցի համեմատելով ստացուածքն։

ԳԼՈՒԽ ՃԶ.

Ով ոք որ ծախիւք իւրովք, և կամ ժողովածու դրամօք կազմեսցի սեղան և արասցէ հրաւիրում հանդիսի, նա ինքն բազմեսցի 'ի գլուխ սեղանւոյն։

ԳԼՈՒԽ ՃԶԱ.

Ամենայն արու բնութիւն մարդոյ պատուելով փառաւորեսցի, էգս բնութեան մարդոյ և Օգնական արդարութեան նմայ լիցի։

ԳԼՈՒԽ ՃԶԲ.

Ամենայն կանայք և դստերք գլուխն բաց երեսն բաց ազատապէս շրջեսցեն բայց 'ի տան Տեառն Աստուծոյ քողաւորեալ։

ԳԼՈՒԽ ՃԶԳ.

Որում տան որ ոչ դոցէ էգ 'ի բնութենէ